

VALÉRIE MANTEAU

**LESILLON**

Bookmark

Վ Ա Լ Ե Ր Ի Մ Ա Ն Տ Ո

ՎԿՈՍ

ՎԵՊ

Թարգմանությունը ֆրանսերենից՝  
Սամվել Գասպարյանի



ԵՐԵՎԱՆ  
2021

ՀՏԴ 821.133.1-31 Մանտո  
ԳՄԴ 84(4Ֆր)-44  
Մ 277

Մ 277 Մանտո Վալերի  
Ակոս: Վեպ/ Վ. Մանտո.- Եր.: Newmag, 2021.- 268 էջ:

Վալերի Մանտոն սիրահարված է Ստամբուլին ու դրա բնակիչներին, սակայն նրան վրդովեցնում է այդտեղ տիրող քաղաքական ու հանրային մթնոլորտը՝ համատարած սարսափ, ատելություն ու կասկած: Հենց այս ցածր բնագոյներն է Ռեջեփ Էրդոհանը բորբոքում «քառսի եզրին հայտնված այս երկրում, որը դեգերում է արմատականության և բռնապետության միջև»:

Բոսֆորի ասիական ափին ապրելով՝ գլխավոր հերոսուհին 1.5 տարի հետաքրնում է Հրանտ Դինքի կյանքը: Նա նեղուցի մի ափից մյուսն է անցնում, էժան ճաշարաններում քաբաբ ուտում, տրվում յոզային, քայլում այն բանտերի մոտով, որոնցում իրենց հայացքների համար տառապում են 150 լրագրողներ, հետևում Հրանտ Դինքի ուրվականին, որը մի ժամանակ խոստացել էր «դրախտի վերածել այս դժոխքը, որում ապրում ենք»:

Այս դժոխքում է, որ մոլեռանդների անբոխը մի երեկո, Ռամադանից հետո, ծեծում է երաժշտական խանութի տիրոջն ու հաճախորդներին, որոնք Radiohead-ի նոր ալբոմն էին լսում: Այս դժոխքում են ահաբեկիչները 2016-ին հարձակվում Աթաթուրքի օդակայանի վրա: Այն նույն օդակայանի, որտեղով 2017-ին հերոսուհին փախչում է Ֆրանսիա՝ իր վիզայի ժամկետը լրանալուն պես:

ՀՏԴ 821.133.1-31 Մանտո  
ԳՄԴ 84(4Ֆր)-44

Այս գրքի հայերեն հրատարակությունն իրականացվել է Ֆրանսիական ինստիտուտի՝ հրատարակությունների աջակցության ծրագրի և ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության աջակցությամբ:

Cet ouvrage a bénéficié du soutien du Programme d'aide à la publication de l'Institut français et du soutien de l'Ambassade de France en Arménie.

ISBN 978-9939-884-15-8

Valérie Manteau © Le Tripode, 2018

“This edition is published by arrangement with Éditions Le Tripode in conjunction with its duly appointed agent Books And More Agency #BAM, Paris, France. All rights reserved.”

Վալերի Մանտո, «Ակոս» © 2021, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

Գիտերք արդյոք, թե մարդու համար  
ինչ է նշանակում ամփոփված լինել  
վախվորած աղավնու վիճակի մեջ:

Հրանտ Դինք (1954-2007)

BOOKMARK



Ռեստորանների դիմացի փոքրիկ հրապարակի մոտ մի շինություն կա, որը եկեղեցի է հիշեցնում: Հիմա այնտեղ են, շինության մոտ քեզ են սպասում. խենթանալ կարելի է, օր չկա, որ չանցնեն այս հրապարակով, բայց այս զանգակատունը երբեք աչքովս չի ընկել: Էսսեիստ Էջե Թեմելքուրանն\* ասում է, որ ժամանակակից Թուրքիայի հիվանդությունը մեր ընտրովի հավկուրությունն է. արի ու տես, որ ես նույնպես թուրքի նման տառապում են հիշողության կորստով: Էջեի կարծիքով, եթե անցորդներին հարցնեն, թե ով է կառուցել Անատոլիայի քաղաքների հենց սրտում գտնվող այս եկեղեցիները, նրանք, համակված դրանց ուրվապատկերների անհանգստացնող տարօրինակությամբ, կույրզկուրայն կպատասխանեն՝ համարյա նախապատմական կառույցներ են: Քաղկեդոնի Սուրբ Եվփիմիա եկեղեցի. անունը, ճիշտ է, դժվար ընթեռնելի է, բայց այն բնավ նախապատմական չէ: Սառան դեռ չի եկել, ուստի շեմից ներս են մտնում եկեղեցու մասին ավելի շատ բան իմանալու ցանկությամբ, բայց այնտեղ ամեն ինչ գրված

---

\* Ece Temelkuran, Էջե Թեմելքուրան (ծնվ. 22.07.1973) – թուրք հայտնի լրագրող և գրող: Երկու անգամ հոչակվել է «Թուրքիայի ամենաշատ կարդացվող քաղաքական սյունակագիր»: Շուրջ 12 գրքերի հեղինակ է, որոնց թվում է «Խորը լեռներ. հայ-թուրքական սահմանաբաժանը» գործը (Deep Mountain, Across the Turkish-Armenian Divide, Verso 2010): 2018 թ. Թեմելքուրանի «Դարձ» վեպը թարգմանվել և տպագրվել է հայերեն: Այն պատմում է 1980-ի հեղաշրջմանը նախորդող իրադարձությունների մասին Անկարայում ապրող երեխաների՝ Ալիի ու Այշեի աչքերով: (Ծանոթագրությունները՝ newmag-ի):

է հունարեն: Դիմում եմ համացանցի օգնությանը: Wikipédia-ն անհասանելի է, որովհետև կառավարությունն արդեն մի քանի ամիս արգելափակել է այն: Բայց կան արգելանքը շրջանցող կայքեր: «Ք. ա. 685 թվականին Բոսֆորի հարավային ափին հույների հիմնադրած Քաղկեդոնը նայում է, թե ինչպես է նեղուցի մյուս կողմում երևան գալիս իր կրտսերն ու մրցակիցը՝ Բյուզանդիոնը: Երկու բնակավայրերն էլ բարգավաճում են: Հետագայում Քաղկեդոնը հաջորդաբար գրավում են մեգարները, պարսիկները, մակեդոնացիները, բյուզանդացիները, հռոմեացիները, նորից պարսիկներն ու նորից հռոմեացիները, այնուհետև՝ արաբները, ինչից հետո, Կոստանդնուպոլսի անկումից մի դար առաջ, Քաղկեդոնն ընկնում է Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Հունարեն անվանումը և խառը բնակչությունը՝ լատիններ, հայեր և հրեաներ, Քաղկեդոնը պահպանում է մինչև 20-րդ դարի սկիզբը: Կայսրության մասնատումից հետո Լոզանի պայմանագրի համաձայն՝ երկրից վտարված հույները Հունաստանում ստեղծում են երկու տարբեր Նեա Քաղկիդոնա, իսկ Բոսֆորի Քաղկեդոնիան դառնում է Քադիքոյ («դատավորի գյուղ») և 1930-ին մտնում Ստամբուլի նորաստեղծ քաղաքային համայնքի կազմի մեջ»: Ահա այսպես, Ստամբուլի շուկայի մուտքի հարևանությամբ այսօր էլ շարունակում են կողք-կողքի կանգուն մնալ հայ առաքելական մի եկեղեցի և հունական ուղղափառ այս եկեղեցին, որը կրում է 3-րդ դարում այստեղ ապրող մի սուրբ մարտիրոսուհու՝ Եվփիմիայի անունը: Ստույգ հայտնի չէ՝ նրան գլխատել են, թե՞ գցել վայրի գազանների առաջ: Ընդունված տեսակետի համաձայն՝ ամեն տարի, սեպտեմբերի 16-ին, նրա դամբարանից արյուն է հոսում: Ցանկանալով վերջ դնել այդ

բացառիկ երևույթին՝ պարսիկները փորձում են այրել սրբուհու մասունքները, սակայն ստանում են ավելի շատ արյուն. անվնաս մնացած սրբուհին մի քանի դար անց դառնալու էր մեկ այլ հրաշքի հեղինակ:

Երբ Սառայի հետ ծանոթացա, նա ապրում էր ճախականների այս հավաքատեղիում, որտեղ հիմա ես եմ բնակվում: Նա վարձել էր մի մեծ բնակարան, որտեղ կարճաժամկետ և միջնաժամկետ համավարձակալները՝ տեղացի թե օտարերկրացի, անընդհատ իրար էին փոխարինում, քանի որ (և դա արդեն կայացած փաստ է) Ստամբուլում բնակարանների վճարները և Թուրքիայում մարդկանց աշխատավարձը վաղուց իրար համարժեք չեն: Այդուհանդերձ, 21-րդ դարասկզբի առաջին մի քանի տարիների տնտեսական ճգնաժամից հետո Թուրքիան, թեև դժվարությամբ, թափ հավաքեց և ոտքի կանգնեց: Աշխարհիկ Ստամբուլն ընտրություն էր կատարում երկու ափերի միջև և ավելի մեծ հաճույքով էր լքում Բոսֆորի հյուսիսային եվրոպական ափը, որը խրված էր կարոտախտի մեջ, և հետզհետե նվաճում էր ասիականը, որտեղ ծաղկում էին սրճարանները, պատկերասրահներն ու դաջվածքի սրահները: Ամռանը, երեկոյան ժամերին, գարեջրի գավաթները ձեռքներիս նստում էինք ափամերձ ճեմուղու քարաժայռերին և սկսում քամահրանքով խոսել մայր մտնող արեգակի տակ մեր դիմաց տարածվող ծերունազարդ Բյուզանդիոնի, Սուրբ Սոֆիայի տաճարի և Կապույտ մզկիթի մասին, որոնք ամբողջովին գտնվում էին զբոսաշրջիկների տրամադրության տակ: Բայց պետք է նաև զգույշ լինեինք, որովհետև այստեղ ալեբախությունը կարող է մեծապես վնասել:

Զևարը հո իզուր չէր որոշել, ի խրատ բոլորի, Պրոմեթևսին գամել Կովկասյան լեռներից մեկին, որը, ամենայն հավանականությամբ, գտնվում է այն լեռան հարևանությամբ, որի մասին խոսում էր իր տապանի մեջ նստած Նոյը՝ խորհելով ջրերի հորձանքով քշված Անատոլիայի մեղսագործ մարդկության մասին:

Հարավում Արաբական գարուն է, հյուսիսում բողոքավորներն են. 2010 թվականի Թուրքիան ալեկոծվում է Թաքսիմ հրապարակում, թատերաբեմ, որտեղ պահպանողական կառավարության դեմ բռնկված բավականին տպավորիչ ապստամբությունը մեր հիշողության մեջ ընդմիջտ կմնա հարևանությամբ գտնվող հայկական գերեզմանատան պատին փորագրված «Գեզի զբոսայգի»՝ ոչինչ չասող անվամբ, որը պատմության մեջ մտավ այն բանի պատճառով, որ Ստամբուլի նախկին քաղաքապետ, այժմ նախագահ ընտրվել պատրաստվող վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն այն վաճառեց շինարարական կապալառու կազմակերպություններին\*։ Միջազգային լրատվամիջոցների մեկնաբանները և Թուրքիայի նրանց գործընկերների գերակշիռ մասը, որոնք ժամանակին մեծ ոգևորությամբ կանգնել էին Էրդողանի կողքին, երբ իրեն և բոլորին համոզում էր, թե ընտրել

---

\* Ստամբուլի կենտրոնական Թաքսիմ հրապարակին կից Գեզի այգում բողոքի ալիքը սկսեց մի քանի հարյուր ցուցարար: Նրանք դիմադրում էին Թուրքիայի իշխանության որոշմանը՝ հատել այգու ծառերն ու կառուցել առևտրի և զվարճանքի կենտրոն: Ամիսներ անց ցուցարարների թիվը հասավ 100 հազարի՝ ցույցը բնապահպանականից վերածվեց հակաիշխանական ակցիայի, տարածվեց Թուրքիայի գրեթե բոլոր նահանգներում՝ անկարգություններով, ոստիկանական դաժանություններով: Դատարանը նախ չեղարկել է իշխանության թույլտվությունը, ապա նորից թույլատրել ծառերի հատումը: Ոստիկանները ցուցարարներին ցրել են ծանր տեխնիկայով: 2020-ի տվյալով՝ այգու ծառերը հատված չեն:



է ժողովրդավարության ուղին, ականատես լինելով Գեզիում տեղի ունեցող անմարդկային ճնշումներին, դեռևս չէին շտապում վերանայել իրենց կարծիքը: Մեծ երեկոյին հաջորդած գիշերը կարճ տևեց. ոստիկանի՝ արցունքաբեր գազով նըռնակից խոցված պատանին իր 15-ամյակը նշեց մահաթմբի մեջ ու վախճանվեց: Վրեժի ծարավ էրդողանը, որ որոշել էր ինչ գնով ուզում է լինի պատին դեմ տալ դժգոհ տարրերին, համախոհների միջոցով լռեցնում է զոհվածի ընտանիքին: Ինքնաբուխ կազմակերպված խաղաղ նստացույցը, որը վերածվում է բողոքի ցույցի, ոստիկանությունը դաժանաբար ցրում է: 2013-ին երկիրը ժողովրդավարական ուղու վրա դնելու հույսը խեղդում են արցունքաբեր գազով: Պայքարը վերսկսվում է 2015-ին: Քրդստանում խաղաղության գործընթացը վիժեցնում են, Սիրիան հայտնվում է բոցերի ու արյան մեջ. ինչպես 1940-ականներին, պետության վերին օղակներ է վերադառնում պահպանողական քաղաքականությունը: Հետվնասվածքային ախտաբուժության գծով նորընծա դիպլոմավոր Սառան Ստամբուլից տեղափոխվել էր ու հաստատվել Սիրիայի հետ սահմանին, փախստականներով բնակեցված հակամարտության գոտում, որը, ինչպես երևում էր, դեռ երկար էր տևելու և ավելի էր տարածվելու: Դա ընդամենը երկու տարի առաջ էր:

- Ես քեզ հավատացնում եմ, և դա հոգեբույժն է ասում, երկու տարին չափազանց շատ է: Գազիանթեփում խելագարվում եմ: Ընդ որում, գործս դժվար չէ. իմ ամբողջ ժամանակն անցկացնում եմ մարդասիրական կազմակերպությունների աշխատողներին իրենց տներն ուղարկելով, որոնք կես տարի, մեկ տարի հետո այլևս չեն դիմանում: Ես կարողանում եմ

շատ արագ մարդկանց մոտ բացահայտել ուժասպառության առաջին նշանները և կռահում եմ՝ այդ բոլոր նախանշանները, դեռ մի բան էլ ավելի, ես նույնպես ունեմ: Ես անընդհատ լալիս եմ, նույնիսկ այն ժամանակ եմ լալիս, երբ սեքս ենք անում. դա արդեն անտանելի է, ներիր ինձ, habibi\*, բայց դա ճշմարտություն է, ես դեռ կարող եմ «ոչ» ասել:

Սառայի կողքին նստած Իբրահիմը վեր է թռչում, բայց չի առարկում, մեզ լսում է՝ հայացքը ուրիշ տեղ, ժպտում է անհասցե, քաղաքավարի ժպիտով. հետաքրքիր է՝ անգլերեն հասկանում է, թե՞ ոչ, հետևում էր արդյոք մեր խոսակցությանը: Այդպես էլ չհասկացա, թե Սառան ինչու նրան ծանոթացրեց ինձ հետ: Ուզում եմ հասկանալ՝ Իբրահիմի ցանկությամբ ենք թեյ խմում այս բարում, որտեղ ոգելից խմիչք չեն տալիս: Որքան հասկանում եմ, նրանք ոչինչ չունեն ինձ հայտնելու: Գազիանթեփում իրենց ապրած կյանքի մասին հարցնելիս՝ շրջվում եմ Իբրահիմի կողմը, նա կարծես ցանկանում է իրականությունը հավասարակշռված ներկայացնել, բայց Սառան ընդհատում է նրան և, դեռ մի բան էլ եղածին ավելացնելով, խոսում ավելի բարձր ձայնով, քան պետք է:

- Թուրքերը, քրդերը, սիրիացիները, այդ կեղծ մարդասեր աշխատողները, բոլորն էլ թող սատկեն իրենց քաքոտ կիսալուսնի մեջ: Այս հողն անիծյալ է, ճար ունեք՝ փախեք այստեղից: Տեսնում ես, չէ՞, արդեն մտածում եմ այստեղից գնալու մասին: Բայց ո՞ր. ամեն դեպքում ոչ Ֆրանսիա, շնորհակալ եմ, ձեզ մոտ նույնպես ոնց որ թե մեղր չեն բաժանում: Եվրոպական երկերեսանիությունից պարզապես զզվում եմ: Միացյալ Նահանգներ. ավելի լավ է՝ կախվեմ: Ճիշտը մի կանա-

\* Habibi (արաբ.) – սիրելիս, թանկագինս:

դացի ճարելն է... բայց դա իմ խելքի բանը չէ (Սառան հուսահատ տեսք ունի, Իբրահիմը կարեկցանքով նայում է նրան), ես այստեղի տղամարդկանց եմ սիրում:

Իբրահիմը ժպտում է:

- Միակ հույսս ինքն է, որ «Ամերիկյան բլրակներ»<sup>\*</sup> է սիրում, - ավելացնում է Սառան ծխախոտը հանելով, - մի հարցնող լինի, թե ինչու:

Նա դուրս է գալիս ծխելու՝ ինձ ու Իբրահիմին թողնելով մենակ: Ես չգիտեմ, թե նա ինչ գիտի Սառայի մասին, իմ մասին, տեղյակ է արդյոք, որ ես ու Սառան մի ժամանակ սիրեկաններ ենք եղել: Նա հարցնում է՝ Ստամբուլում ընկեր ունե՞մ: 2013-ին, երբ հայտնվեցի Սառայի տանը, գրպանումս ոչ մի գրոշ չկար, այդ ժամանակ ճանապարհորդում էի իմ ընկերների կամ ընկերներիս ընկերների տանը քնելով, իսկ երբ ընդհանրապես որևէ հասցե չէի ունենում, օգտվում էի հմուտ ճանապարհորդների համայնքի համար նախատեսված կայքերից: Սառայի հետ ծանոթացել եմ այդպիսի մի կայքում: Կարելի է ասել՝ մասնավոր անձանց հայտարարությունների միջոցով: Queer<sup>\*\*</sup> հոգեբան, որ զբաղվում է հասարակական շարժումների ու երկրի ժողովրդավարացման հարցերով.

\* Roller Coaster, «Ամերիկյան բլրակներ» – պոպուլյար ատրակցիոն լունապարկերում: Եվրոպական երկրներում, այդ թվում՝ Ֆրանսիայում, այն անվանում են «Ռուսական բլրակներ»: Հետխորհրդային երկրներում ավելի ընդունված է «Ամերիկյան բլրակներ» ձևակերպումը:

\*\* Queer, Քվիր (անգլ.՝ տարօրինակ) – եզրույթ, որն օգտագործվում է սեռական և գենդերային այլ ինքնություն ունեցող անձանց համար, որոնք չեն համապատասխանում հետերոսեքսուալ կամ ցիսգենդեր ինքնությանը: Եզրույթն ավելի ակտիվ գործածության մեջ է դրվել ԼԳԲՏԲ անձանց մարդու իրավունքների պաշտպանության շարժմանը զուգահեռ: